## *ՏԵՂԵԿԱՆՔ*

***«ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ-ի թիվ 59-Ն որոշման վերաբերյալ***

«ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ-ի թիվ 59-Ն որոշման ընդունման նպատակ էր պարզեցնել ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու գործընթացը, կրճատել անձի կողմից դիմումը ներկայացնելուց մինչև քաղաքացիության վերաբերյալ ՀՀ Նախագահի հրամանագրի ընդունումն ընկած ժամանակահատվածը, կրճատել քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Մասնավորապես՝

1. Նախկինում գործող նորմերի պահանջների համաձայն Արտաքին գործերի նախարարությունը փաստաթղթերը ստանալուց հետո 1-ամսյա ժամկետում դրանք ուղարկում էր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: **ՀՀ կառավարության 29.01.2010թ-ի թիվ 59-Ն որոշման**/այսուհետ՝ որոշում/ **պահանջագրերի ուժով այս ժամկետը կրճատվում է մինչև 15 օր:**

2. Նախկինում գործող իրավական նորմերի համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը փաստաթղթերը ստանալուց հետո 2-ամսյա ժամկետում է դրանք ուղարկումՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն/ այսուհետ՝ Վարչություն/: **Որոշմամբ սահմանվել 1-ամսյա ժամկետ:**

Ընդհանուր առմամբ, դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում քաղաքացիություն ձեռք բերելու համար տրվող դիմումների քննարկման և ՀՀ Նախագահին ներկայացնելու գործընթացի ժամկետը 5 ամսից կրճատվել է մինչև 3,5 ամիս, իսկ Վարչությունում տրվող դիմումների քննարկման գործընթացի ժամկետը՝ 3 ամիս 20 օրից կրճատվել մինչև 2 ամիս 20 օր:

3. ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար ներկայացված դիմումները քննարկելիս ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից գործնականում **կազմվում է եզրակացություն: Այս գործընթացն իր ամրագրումը ստացավ որոշման դրույթներում,**

4. Որոշումով լրացում է կատարվել քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար լրացվող հարցաթերթիկի ձևում: Գործող որոշման համաձայն՝ հարցաթերթիկը

ներառում է դրույթներ **հարցաթերթիկ լրացնողի՝ կեղծ տեղեկություններ (տվյալներ) ներկայացնելու համար պատասխանատվության մասին զգուշացված լինելու վերաբերյալ,**

5. Նախկինում գործող կարգի համաձայն՝ փաստաթղթերը, եզրակացությունները և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ստուգման թեսթը Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ էին ներկայացվում ՀՀ կառավարության աշխատակազմի միջոցով: Քանի որ ՀՀ կառավարությունը վերոնշյալ նյութերը չէր ուսումնասիրում և դրանք առանց որևէ փոփոխության ուղարկում էր ՀՀ Նախագահի աշխատակազմ, հետևապես, լրացուցիչ ժամանակի կորուստ չունենալու նպատակով, որոշմամբ սահմանվել է **Վարչության կողմից վերոնշյալ նյութերը անմիջականորեն ՀՀ Նախագահի աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ դրույթ,**

6. ՀՀ քաղաքացիություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի **ցանկից հանվել է ինքնակենսագրությունը** (ՀՀ քաղաքացիություն ստանալու համար պահանջվող հարցաթերթիկում լրացվում են անձի կենսագրությանը վերաբերող բոլոր տեղեկությունները,

7. Փաստաթղթերի **ցանկերից հանվել են աշխատանքային գործունեության մասին տեղեկանքները,** քանի որ հարցաթերթիկում անձի կողմից լրացվում է իր աշխատանքային գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն,

8. Եթե նախկինում ՀՀ քաղաքացիություն ստացող անձը պետք է ներկայացներ տեղեկանք դատվածության մասին այն երկրից, որտեղ վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է, ապա **որոշումով առաջարկվում է նշված տեղեկանքը ներկայացնել անձի քաղաքացիության երկրից, իսկ եթե անձը ապաքաղաքացի է, ապա՝ ճամփորդական փաստաթուղթ տված երկրից, քանի որ գործնականում դժվար է ստույգ պարզել այն երկիրը, որտեղ անձը վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է:**

*ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ*